

ըլլայ. իսկ իրենք հոս միայն քանի մը գրամներ գտած են: Արդեօք որչափ բան այսպիսով կը կորսուի, որովք հնութեան թերեւս թանկագին յիշատակարաններն էին. (տես էջ 54—60.) Ճամբու յաջորդ հանգրուանի՝ Պայասի (հին Bajae, որ սիրուած բաղնիք մըն էր) մասին բաւական զուարճիւթեքներ կը պատմէ ուղեւորն ('տերեպէյ, Քիւլէիս Սլի եւ Խալիլ-պէյ տիրապետաց սերագործութիւնքն), եւ դիզկին՝ որ այժմ Ատանայի կուսակալութեան բանան ու պատժարանն է. (տես էջ 61—67.) Աղէքսանդրեանէ շատ յաջող գիրք մ'ունի. Բէյրութէն մինչեւ հոս բոլոր ծովեզերքն ասկէ լաւ նաւահանգիստ չկայ, եւ իբրեւ այսպիսի՝ կրնայ մեծագոյն ապագայ մ'ունենալ, քանի որ դէպ չալէպի եւ Եփրատակողմանցն բնական մուտքն է: Բայց ուղեւորը տակաւին շատ խեղճ վիճակի մէջ գտած էր, հազիւ երեք հազար բնակչով եւ կիլիմայով մը որ բոլորովին վատաւորը է՝ շրջակայ տեղաբեր ճահճներուն պատճառաւ: Ըստ ինքեան քաղաքը Ասորիքի չի վերաբերիր, բայց արդէն հոս սիրողն է արարական աշխարհքը եւ արաբական լեզուն, եւ նոյն իսկ Եփրատի անապատի հովը (խամիր) մինչեւ հոս իւր ազդեցութիւնը կը տարածէ. (տես էջ 67—71.) Այնուհետեւ ճամբան նախ ճահճներուն մէջն կ'անցնի, մինչեւ որ կը հասնի Ամանոսի շղթան եւ օձապտոյտ եւ խոր վիհերու քովն կ'ենթա վեր Բէյլանի անցքը: Բէյլան գեղեցկագիր տեղ մըն է եւ լաւ շինուած դարաստանաձեւ լեռան կողքին վըայ, վարը՝ ոտքին տակ՝ խորունկ կիրճը: Հոս կ'ապաստանին վատաւորը եղանակներուն Աղէքսանդրեակի եւ նաեւ չալէպի բնակիչները: Ասկէ ներս արդէն ասորական հող է, եւ հեռուն կը նշմարուի Անտիոքայ լիճը (զոր, կ'ըսէ, Արաբները 'Արգարու լիճ' կը կոչեն): Ճամբան ու կիրճը ամենահին դարերէ վեր անցքն էր ամէն ազգաց, որ պատմութեան մէջ դեր մը խաղացած են (տես էջ 71—81.) Նշանաւորն Անտիոք այժմ հնոյն հազիւ տասներորդ մասը կը բռնէ տարածութեամբ, այն որ գարեջրով միջնափայլն էր բնդհանուր քաղաքակրթութեան մը՝ որ ծագած էր յունական եւ ասիական տարեբայ խառնուրդէն: Փառաւորութեամբ եւ բնակչաց թուով կը մրցէր նոյն իսկ Հռոմի հետ, թէեւ, կ'ըսէ, Նոր քաղաքս հին Հռոմի հանդէպ անշուշտ այնպիսի ազդեալ մ'ունէր՝ ինչպէս է այժմ Նիւ-Եորկ լոնդոնի դիմաց: Իբրեւ կենդան մը արուեստից եւ գիտութեանց՝ չէր կրնար մրցիլ Աղէքսան-

դրիոյ հետ, բայց բնիկ միջավայր մըն էր զուարճութեանց եւ խրախուժեանց, Իբրեւ բնական վայր մ'ամէն կարգի ազգաց՝ որ հոս ի մի կը ձուլուէին՝ առանց որոշ ազգութեանց, առանց ազգային աւանդութեանց եւ ենթակայ ամէն տեսակ տպաւորութեանց, յարմար տեղի մըն էր անսանձ ապականութեան քով՝ նաեւ ամենախիտ վարուց, Հոս էր որ քրիստոնէութիւնն սկսաւ իւր ընթացքն իբրեւ համաշխարհային կրօնք մը՝ ելլելով զուտ հրէական շրջանէն. (տես էջ 78—85.)

Այս գլխով կը փակուի գրքիս մեղի համար հետաքրքրական մասը: Այցուած է 'Չմուռնային Ափրիկէն', խորագրեալ նամակ մը՝ ուղղուած Վալսերբը ազատատեսուն եւ գրուած Բատնոյէ յԱլճիեր, նկարագրելով Սահարան Այս ալ նախնաբար տպուած էր նոյն թերթին մէջ՝, ինչպէս տեսնուեցաւ՝ համառօտ ուղեգրութիւնս սիրուն գրուածք մըն է, որ հետաքրքրութեամբ կը կարդացուի: 4. 6. 8.



Ս Ա Տ Ե Ն Ա Պ Ր Ա Վ Ն

Մ Յ Ժ Ն Տ Ր Գ Ո Տ

(Հրատարակութիւն)

Բ.

Այս մասում մեր կը քննենք Խորենացու երկրորդ գրքի վերջին ութ գլուխները, որ քաղուած են 'ի համբաւուց արանց արանց իմաստնոց եւ հնախոս սիրաբանից, եւ ամփոփում են Տրդատեան շրջանի շարունակութիւնը եւ վախճանը:

Իմ 'Հայոց Վէպ' քննադատական երկի մէջ բաւականաչափ խոսուած է 'Թաղաքս Կուռտանքի Մաքսիմիայ, եւ թէ որպէս հանդիպեցաւ հաւատոց', եւ 'Թաղաքս Կուռտէի Երանէլոյ, եթէ որպէս եղեւ պատճառք փրկութեան Վրաց', գլուխները մասին: Բայց ես աւելորդ չեմ համարում դառնալ սրանց, Խորենացու լոյս տեսած Նոր աղբիւրների առիթով — այն է Սկիրատի հայոց թարգմանութեան, որպէս եւ

„Aus dem winterlichen Afrika“. Brief an Alexander Freih. v. Warsberg. լոյս տեսած նոյն թերթին մէջ՝ Beilage der Münchener Allgemeinen, 27. Mai 1887.

- 1 էջ 19—30.
- 2 Երբ. Բ. 24.
- 3 Երբ. Բ. 25.

«Վարք Ս. Սնդղեստրոսի» երկու խմբագրութիւնները Այս հրատարակութեանը կցած ընդարձակ յառաջաբանում նրա հրատարակիչը, Հ. Մեարովի վարդ. Տեր Մովսիսեան, պնդում էր գլխաւորապէս այն, որ խորենացին չէր Եւանջել Սեդրատի հայ թարգմանութեան հետ, որ յիշեալ 29 եւ 29 գլուխները կազմելու հայ պատմիչը «բացի առանձին մեր ծնողը Հայաստան վարք Ս. Սնդղեստրոսի խմբագրութիւնից», օգտուիլ է, որպէս աղբիւր, նաեւ «մեզ Հասած Ագաթանգեղոսի պատմութեան մասերից»:

Հարկաւ տարօրինակ է, պայսիսի մի միջոց, որ գործ է ածուած ի պաշտպանութիւն խորենացու, ապացուցելու թէ հայ պատմիչ ձեռքում եղած Ագաթանգեղոսի խմբագրութիւնն անհամաձայն է մեր ձեռքը հասածին, եւ թէ նա անծանօթ էր նորերս հրատարակած Վարք Ս. Սնդղեստրոսի և գ. վերջերի հայ թարգմանութեան խմբագրութիւններին — եւ դառնով առանց առնել այն ծակառաքայլին հարցի լուծման, թէ «Հայոց պատմութեան» գրութիւնը է. դարից յետոյ լինելու է:

Այսպիսի կամայական եղբակցութիւն Ագաթանգեղոսի պատմութեան մեր ձեռքը իր թէ Հասած մասերի վերաբերմամբ, առիթ տուաւ Մովսէսի 29 եւ 29 գլուխների վերջը բերած գիտողութիւնը, «որպէս (Համառօտ) ուսուցանէ թեզ Ագաթանգեղոս: Մինչդեռ յիշեալ գլուխներից առաջնում խորենացին յեռում է Ագաթանգեղոսի վկայութեան վրայ որպէս աղբիւրի, ոչ այն առապելի, որ նա այն տեղ առաջ է բերում (կոտանդներ եղեւփանդական բորոտութեան եւ նրա մանուկների արեան մէջ լողալու մասին) եւ որը գիտէ միայն սրբոյն Սնդղեստրոսի վարքը, — այլ որպէս աղբիւր սոյն գլխի ընդհանուր բովանդակութեան (կոտանդների թագաւորանալու մասին, յաղթական խաչադրօշի երեւումը նրան եւ նրա շքմարտու Աստուծո հաւատալը) եւ մասամբ — նրա վերջին նախադասութիւնը՝ «բռնեալ աւօրսն ամենայն բառնալով Աստուծոյ յարեւացի տորս (կոտանդների), (որպէս համառօտ ուսուցանէ թեզ Ագաթանգեղոս)»:

Արդարեւ «Հայոց Գարձի, հեղինակն իր պատմութեան շինել գլխում համառօտ պատմում է կոտանդների թեզաւորանալու մասին, նրա հաւատալը շքմարտու Աստուծոյ, յաղթական

խաչադրօշի երեւումը, եւ եկեղեցիների ու մատուռների հիմնարկութիւնը — մասնաւորապէս շեշտելով «բռնեալ աւօրսն ամենայն բառնալով Աստուծոյ յարեւացի տորս» — «դիտկելաբանութեան, Մարկիանոսին, Մաքսիմիանոսին, Լուկիանոսին եւ Մաքսիմիանոսին»:

Այս պատմաւորով ի դուր են յոյս դնում Ագաթանգեղոսի պատմութեան մեր ձեռքը Հասած մասերի վրայ: Վերջինս առանձնապէս հակուած լինելով գէպի հրաշքներին նկարագրութիւնը եւ չորս էլ նուիրելով կոտանդիանոսի գարձին, ոչ մի խօսքով չէ անարկում խորենացու մէջ յիշուած հրաշքը, որի մասին նա, Ագաթանգեղոս, հարկաւ առիթ կուեննար պատմելու, թէեւ համառօտ, եթէ միայն այդ մասին գիտենար:

Բացի այդ, մեր պատմագրի 29 գլխում գործածած մի քանի բնորոշ խօսքերը, որոնք ընդհանրապէս անսովոր են նրա շարագրութեան ոճին, բոլորովին իտրիք են Ագաթանգեղոսին եւ, ընդհանրապէս միանգամայն յատուկ են Սեկրատի հայ թարգմանութեանն եւ նրան կցած Վարք Ս. Սնդղեստրոսի՝ երկու խմբագրութիւններին: Աւստի բառացի նմանութիւններն, որ նկատուում են խորենացու հաղորդած աւանդութեան նկարագրութեան եւ յիշեալ «Վարքուց» մէջ, կարելի է բացատրել ոչ այլ կերպ բայց միայն հայ պատմիչ փոխառութեամբ. Մովսէս, անշուշտ, օգտուել է վարք Ս. Սնդղեստրոսի երկու խմբագրութիւններից եւս:

Որպէս զի այս հարցի նկատմամբ ոչ մի կասկած չմնայ, եւ առաջ կը բերեմ «Վարքի» երկու խմբագրութիւնների պատմութիւնը կոտանդների մասին, ընդգծելով խորենացու փոխառած բառերն ու ասացուածքները:

Ընդհանուր Լուս. Ս. Սեդրատ:

«... Եւ հառեալ ի պատմութեան ի համար յաղթութեան (հայր Մեծին կոտանդների կոտանդ) թագաւորեաց թագաւոր եւ երեւելի փառք: Եւ առ իր կին զբնոր Մատթիոսի թագաւորին, յորմէ եղեւ որդի անիմա... եւ ապա խորհուրդ ընդ սինու կիտանոսին, որ խորհուրդական կոչի, զի գացի մանուկ մի իմաստուն գեղեցիկ յորդեալ գրութեան, որպէս թէ ամեն զեւ որպաշտն զի ի ձեռն երանաց իմոց զեւ հանեալ որդի կոչեցի...»

Համառօտ Լուս. Ս. Սեդրատ:

«... Եւ հառեալ կոտանդի պատմութեան ի համար յաղթութեան (հայր Մեծին կոտանդների կոտանդ) թագաւորեաց թագաւոր եւ երեւելի փառք: Եւ առ իր կին զբնոր Մատթիոսի թագաւորին, յորմէ եղեւ որդի անիմա... եւ ապա խորհուրդ ընդ սինու կիտանոսին, որ խորհուրդական կոչի, զի գացի մանուկ մի իմաստուն գեղեցիկ յորդեալ գրութեան, որպէս թէ ամեն զեւ որպաշտն զի ի ձեռն երանաց իմոց զեւ հանեալ որդի կոչեցի...»

1 Սեդրատու Արդարեւի ինքնագրական պատմութիւն, Վաղարշ. 1897:

1 ինչպէս «որդեացեալ», «յառաջ բերեալ», «մարգարէութիւն» տեւ է 8, 166, 763, 768, նոյն հրատարակութիւն:

Հետաքրքրող գլուխը քսան¹ դեպքում զուգահեռ է բաց առաջ էս ընդարձակ վարքին եւ տասններորդ դեպքում զուգահեռ է բաց առաջ էս համառոտ վարքին, չհաշուելով նմանութեան յիշեալ դեպքերը միաժամանակ նրա երկու խմբագրութիւնների մէջ:

Միւս դեպք, երբ խորհրդակցութիւնը լռելով լեզուական վկայութեան վրայ, գտնուում է, ըստ իս, պատճառ թիրիմացութեանց:

“Համարձակմբ ասել, նկատում է նա Ս. Նունէին նուիրած 22 գլխի վերջը — առաքելութիւն եղեալ, բարոյական ինքնաշարժութեամբ զորամբ լիակաց եւ նստրից մինչեւ ի սահմանն Մարտիաց, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս:”

Վերջին ճշմարիտ որ իւր պատմութեան ձեռք գլուխում յիշում է նոյն սահմանները, բայց ոչ Ս. Նունէին վերագրած, այլ Հայաստանի առաքել Ս. Գրիգոր լուսաւորչին. — “Եւ այսպէս... ձգէր տարածանէր զվշտութիւն քարոզութեանն եւ աւետարանութեանն ի Սատաղացւոյ քաղաքէն մինչեւ... առ կաղարջօր, մինչեւ ի իսպառ ի սահմանն Մարտիաց, մինչեւ ի զորոնս Արաքս մինչեւ ի սահմանն Կարսից, ի Փայտարն քաղաքը արքայութեանն Հայոց... — այսինքն համարեա բառացի այն, ինչ որ խորհրդակցութեան վերագրում է Ս. Նունէին: Սակայն Բնչ կերպ կարող էր Ագաթանգեղոս (եթէ մի լուրջ թոյլ տանք, ինչպէս մտածում են ոմանք, որ նա իւր պատմութեան մէջ գրել է նաեւ Ս. Նունէի մասին) առաքելական գործունեութեան նոյն կամ համարեա նոյն սահմանները վերագրել միաժամանակ եւ Ս. Գրիգորին եւ Ս. Նունէին: 22² որ Հայաստանի լուսաւորչին միայն կարող էր նա վերագրել “մինչեւ ի սահմանն Մարտիաց”, ասացուցքը, քանի որ այդ սահմանները Հէնց նրա վկայութեամբ Հայաստանին էին մտնում, եւ այս կողմից “ի Մարտիաց կողմանց”, գտնուում էր Հայոց շարքից բոլորեւթիւնը (գլ. 28-29) Նաեւ Զիւնիքի լեզուագրած “Վրաց ժամանակագրութիւնը” (էջ 66), որի ցուցմունքներն աւելի պիտի համաձայնուէին ժողովրդական աւանդութեանց չունէ “մինչեւ սահմանն Մարտիաց”, ասացուցքը եւ չէ վերագրում այսչափ ընդարձակ տարածութիւն Վրաստանի առաքելութեան:

Այս հարցը կարող էր լուծուել, ըստ իս, շատ պարզ: Խորհրդակցին, որ անկասկած օգտուել է Ստրատոնի, կարգացել է նրա մէջ³ այս խօսքերը, որ զկարգ եկեղեցւոյ ի նոսա հաստատեցան. ըստ առաքելութեան կողմէն, որում ասուին, որ Նունի յղեցեալ սրբոյն Հովնիսիմեա, երբ Հայս կատարեցան: Թողում ասել, որ յաղագս նորա (sic) է պատմութիւն եւ հաւատարմ Հայոց մեծամեծ սքանչելեք ի ձեռն Գրիգորի Պարթեւի խոստովանողին, որ ստոյգ ցուցանէ նորին գիրք⁴ — “Նորա”, գերանշուել խորհրդակցին վերագրել է սխալմամբ, թէ գիտմամբ Նունէին, փոխանակ Հովնիսիմեին: Այս պատճառով եւ Ս. Գրիգորի Գրքի մէջ (“Նորին Գրքը”), այսինքն Ագաթանգեղոսի պատմութեան մէջ, պէտք է լինէր Մովսէսի Ենթադրութեամբ ցուցմունք Ս. Նունէի մասին:

Այսպէս ուրեմն Փ. Ստրատոնի համառոտ նկատողութիւնը Ս. Հովնիսիմեի մասին միանգամայն ճշգրտւում է, նա ակնարկում է Ագաթանգեղոսի հաղորդածը Ս. Կոստի եւ իւր ընկերուհիների մասին, որ հիմայ եւս մեք գտնում ենք “Հայոց Գարձի”, պատմութեան մէջ, առանց որեւէ փոփոխման. Ս. Նունէի մասին տուած տեղեկութիւնն, որ փոխ է առել խորհրդակցին իբր թէ Ագաթանգեղոսից, տանում են մեզ դէպի Ստրատոն:

Արդ՝ յառաջ բերենք Փ. Ստրատոնի այն բառերն ու ասացուածները, որ պահպանել է հայ պատմիչն իւր պատմութեան մէջ Ս. Նունէի մասին. — “... Կինն ոմն լի պարկեշտութեամբ զաստուածային վարս ստացեալ ունէր, հաւածեալ (վանս Բրիտանոն) գա ի Վերս (ի քաղաքն Նախազար, որ էր թագաւորն վրացի... Եւ կինն ի մէջ բարբարոսաց բնակէր ի պարկեշտութեամբ ճշմարտելի պահք եւ ազնութիւք, (պաշտէր զՍտուածն երկնի եւ երկրի... Եւս աւուրց ինչ երանէ յորս թագաւորն: Պատահէ նմա այս ինչ. ունէր միգային խաւար, ուր էր որսն, զլինիսն եւ զգաշտո, զի անպատառ է եւ անտեսանելի էր ճանապարհն... մտախորհ եղեալ կոչել զԱստուած յօգնութիւն, զոր հաւածական կինն պաշտէր, ... Եւ եկեալ պատմեաց կնոյն իւր (եւ Նախարարացն) զեղեալ իրսն: ... Եւ հրամայէր ուրեմն կան-

¹ Իմ քննադատական յօդուածում “Անդրդէպի մէջ թաւած են այս բոլոր դեպքերը. տես էջ 34-35 նոյն յօդուածի աւանդին հըստ:”

² Եւ. Գ. Ստրատոնի էջ 67:

³ Այսպէս, այսինքն “Գրիգոր Գրքի” կողմէն է Ագաթանգեղոսի պատմութիւնը նաեւ Սերբոն, Նոյնպէս է գլ. էջ 121:

գնել (գնշան խաչին Քրիստոսի, եւ զի ոչ էր գործ մարտարի, արհամարհնալ լինէր ի բազմաց... Յայնժամ հրամայէ շինել տուն աղօթիցի, եւ ոչ յապաղեն ականն զասցնեալն, եւ գործաւորն ոչ կարեն ի կանգնել զլինս աղօթիցն մեքենայիւք իրիւք... Աստուծո լինի դաշնաւորութիւն Վրաց առ Կոստանդիանոս, որպէս զի առաքեացն նոցա եպիսկոպոս եւ զքահանայս, որ զկարգ եկեղեցւոյ ի նոսա հաստատեցն. ըստ անաբելուհոյ՝ կնոջ քարոզութեան, որում անուն էր Մունի յընկերաց սրբոյն Հռիփսիմեա, որ ի Հայս կատարեցան»¹։

Յիւրաի դուռն է գալիս, որ խորենացին իսկապէս օգտուել է Փ. Ստորտից կրճատելով նրա պատմածը Ս. Դուռնի մասին, իւր կողմից մի քանի միտումաւոր փոփոխութիւններով՝ Հանդերձ, ինչպէս որ. «Դաշնաւորութիւն առ Կոստանդիանոս», փոխելով Դուռնի գիմնաւ առ Ս. Գրիգոր եւ այլն։

Ի վերջոյ պէտք է դիտել, որ Մովսէս իր հիմնական աղբիւրից զտա՝ իւր գրութեանը օգտուում է որպէս ոճաբանական նիւթ, որով շարագրութեանց առանձին ստացուածքներից եւ բառերից։ Այսպէս բաց է վերջիւնալ Ս. Դուռնէի քարոզական գործունէութեան սա համաներ ի անուններից, Աւաթանդեղոսին է վերաբերում ինչպէս եւ ինքը Մովսէս յիշատակում է «հասին նմա հարուածն ի ծնունդն» ասացուածքը։ — «Երբեք մանաւանդաբար», «ի կրթութիւն մարտ զկեսանս աննելով» ասացուածքները փոխ են առած Դաքնանդազոցի իսկ «օտարացնալ յաշխարհն եւ որ ի սմա, ասացուածքը Կիւրեղ երուսաղէմացոյն»²։

Անցնելով յաւրդք 24 եւ 25 գլուխներէ քննութեան, մենք անմեծ եմք, որ նոցա կրում են, շատ թէ սակաւ չափով, Մաղաղասի ժամանակագրութեան ազդեցութիւնը։

1 Նշեն անհնար «Աւաթանդեղոսի Դուռնի դարն է անուամ» Ս. Դեբարի Վարդապետ (էջ 39), որի հեղինակը համարեմ ծանօթ էր Փ. Ստորտի։

2 Ստորտի եկեղ. պատմ. հայ թարգմ. էջ 61-67։
3 Սյո մասին մանրամասն տես իմ քնն. յօդուածը «ՀԱՆՐԱՊԵՏ»-ում եւ առանձին արտատպ. էջ 48-50։ — Անվանից Հայպետ Դանիթի յօդուածների վերաբերմամբ, որով ծանուցում էր մի քանի ժամանակից ի վեր պաշտպանել ասանդական Հայպետը խորհրդացու մասին, տես յետոյ ուղեւ լին. շարագրութեան վերջին գլուխը։

4 «ԱՆ ՈՐԱՆ», Ը. տես Հայկ. բառ «անպաճաճաբար» եւ նորայր, քննադատ Բ. էջ 80։ — Դաքնանդազոց իսկական ասացուածքը խորհրդացին փոխել է Ս. Մաղաղասի թուականագրի (Գ. ԿԻ), իսկ այստեղ (Ս. Դուռնի վերաբերմամբ) եւ Գ. գրքի վերջին զէ գլուխ (վերջին Սրբալիւծ ի լրատուչեմ ի բարեբերմամբ) բերանէ մի քանի փոփոխութիւններով։

5 Յես «Հայկ. բառ» օտարանալ, բայց։

Այսպէս նոցանից առաջնում, 24-ում փոխ են առած Մաղաղասից «Պարտումն Շապհոյ եւ ակամայ հնազանդութիւն ընդ ծնունդը մեծին Կոստանդիանոսի», պատմութիւնը եւ փրկական փայտի երեւման մէջ հետեւեալ դարձուածքներով. «յետ այնուրիկ առաքեաց (Կոստանդիանոս) գնեղինէ զմայրն իւր յերուսաղէմ ի խնդիր պատուական խաչին, զոր եւ եգիտ իսկ զգիրկական փայտն, հանդերձ հինգ բեւեռօքն»³։

Սոյն գլխի միւս մանրամասնութիւնները, որին Յրգրատի Եկբատանին՝ տրեւել մասին հաղորդածները, յետին ժամանակի «Խաքան, տիտղոսի գործածութիւնն այնպիսի վաղ ժամանակ ինչպիսին Գ. դարն է» եւ. Կամարականներից ցեղականութիւն — Կամարի մասին պատմութիւնը, լուսւմ են ինձ Մովսէսի սեփական յաւելուածներ։

Աւելի ընդարձակ է խորենացու փոխառումը Մաղաղասից իւր 25 գլխում (Լիկիանոսի մասին), որը բաց է այդ, կիսով չափ կազմուած է, ինչպէս են տեսել իմ մի այլ աեղ՝ Կովալեան «Վարդ. Քաղաղի», հատուածներից։ Բացի այն Վարդի հին խմբագրութիւնից, որ չէ պահպանուել, ըստ երեւութի, Հայոց Յայմաւուրքում, խորենացին Լիկիանոսի եւ սրա յարաբերութիւններին մասին Կոստանդիանոսի հետ, պատմելով օգտուել է, ամենայն հաւանականութեամբ, նաեւ Եւսեբիոսի «Եկեղեցական Պատմութեան» հայ թարգմանութիւնից, այն է գրքի ուղեւորող գլխից, որը նուիրած է, ինչպէս այդ երեւում է յոյն բնագրից, Լիկիանոսին։ Ես ա-

1 Պրօֆ. Կարէր մասնաշրջ լինելով Մաղաղասիի միւս, որպէս խորենացու աղբիւրներից մէկ (Nouvelles sources de Moïse de Khorène, Supplém., Vienne 1894), վերջիւնալ հաստատեմ մասին, նկատում է, որ ոչ մէկը պատմիչներից չէ հաղորդում, որ խաղաղութեան զանգ կուռցնէ Հայպետ հե. Կոստանդիանոսի միջին, նամական աեղ թէ այդ պարսից թուագր. որը ինչպէս Սյո մասին Եւսեբիոս «Կոստանդիանոսի վարդ» է պատմում, որին ծանօթ էր հայ պատմիչը, բայց որը կարող էր աղբիւր լինել Մաղաղասին (էջ 317, ed Bonn)։

2 Մաղաղասի էջ 369. — Ստորտի Եվ. Պաղմ.՝ ոչ բնագրում եւ ոչ Հայերէն երկու թարգմանութիւններում բեւեռների թիւն չէ որոշած։

3 խորենացու բնագրից «Եկեղեցական երկրորդ եւ վերապետս յերեւել թուական» — նորայր (Համգի), հրատարակի մէջ կարդում է այլ կերպ. «Երկրորդ շաբաթ յառկանքն ի նախադասութեան հետեւեալ մասին, եւ ոչ եկբատանին»։

4 Համգի. Nöld öke, Artashir i Papakan, էջ 23. — Մենք խաղաղ, Սիւրբուի մաս կուռում է թուական թուագր. որը իսկ Վեւեդի մաս — խաղաղ թուագր. որը։

5 Յես «Հայոց վեպ» էջ 27-30, նաեւ «Կոստանդիանոսի խորհրդացին, Կարճերի. էջ 23 եւ հետա։

ժողովքան եպիսկոպոսք ՅԹԵ. որոց ժողովէին առաջնորդք: Մակարիոս Նրուսադէմի, Աղեքսանդրոս Աղեքսանդրի, Մատաթիոս Անտիոքոս, Սեղեմստրոս Հռովմայ՝, Միսոս փանիս Կոստանդնուպոլսի առաջին եպիսկոպոս, յետ որոյ յաջորդեալ մեծն Աղեքսանդրոս, որոց եւ նզովեալ զԿրիստ մերժեն յեկեղեցւոյ արտաքս. սահմանեցին հաւատս յամենասուրբ Երրորդութիւնն քարոզելով զորդի ի բնութենէ հաւր, զոր խոստովանի ընդհանրական իսթովոյնէ Եկեղեցի՝:

Խորենացու Հենց այստեղ գործածած աւսացուածք՝ ի գարշելին ընկալաւ զսատակունն՝ առած է Նազխանգացուց՝:

Իսկ մանրամասնութիւնները՝ այն է, Յրգատի եւ Ս. Գրիգորի հրաժարումը Նիկիոյ ժողովին մասնակէտից, պատճառաբանելով քաղաքական եւ այլ հանգամանքներով, նաեւ Ռատակէսի հասնելը Կիսարիսի այն վայրկենին, երբ մկրտում էին Գրիգոր աստուածաբանի հօրը, — եւ վերագրում եմ իրեն հեղինակի յաւելումներին:

Ես սրբաբար կանգ չեմ առնի նաեւ Ղ. գլխի վրայ, որքան մէջ հաղորդած տողեկութիւնները Ռատակէսի վերադարձի մասին Նիկիոյ ժողովից կազմուած են ըստ Ագաթանգեղոսի. — «Իսկ երանելին Ռատակէս գալը հասանէր պայծառ ծագեալ հաւատովքն եւ հաստատուն աստուածաշնոյ Նիկիական կանոնադրեւեալ ի Հայաստան երկրի, առաջի գէրե թաղաւորին եւ կաթողիկոսին սբոյ զգրեալ աւանդութիւնն: Որով Ս. Գրիգորի ինչոյն լուսաւորական կանոնսն յաւելեալ առեալ զիր վիճակն զՀայաստան երկիրն պայծառացուցեալ...» (եջ 657):

«Եղեն ժողովեալ հարց երեք հարիւր եւ ութեւտասն ի քաղաքումն Արիանոսաց, զորս նզովեալ մերժեցին ի հաղորդութենէ Եկեղեցւոյ, հատուածը համապատասխան է վերը Կայսերաց Պատմութիւնից առաջ բերած տողերին:

«Նքնանակալն արտասահմանեաց ի մետաղոս, արտայայտութիւնը փոխ է առած Սուրբատի հայ թարգմանութիւնից (եջ 89):

1 Խորենացու յիշած Հռովմայեցի երեցեւոր «Բիւստ եւ Բիկեթոյ» թիւ պատճառով այստեղ եւս յիշու է «Գաւաթ», Կայսրի տեւ ձեւ. իմ մտածն է, թ 28 37. — Միսոս փանիս ընթերցումը բան ինչ նաեւ Սուրբատի հայ թարգմանութիւնը (եջ 108), բայց Միսոսի յիշումն է փայն իբր յաբորք Աղեքսանդրի:

2 Յես «Բիւստ առ Սլեմեսոս, ձեւ. Ալեք. Մի. Թ. 217, եջ 110:

Ինչ վերաբերում է մեր մատենագրի պատմութեանը Գառնի բերդի մասին, ըստ իս, այն պէտք է վերագրել ուշ ժամանակի այն աւանդութիւններին ազդեցութեան, որոնք վերաբերում են Հայոց Նշանաւոր թագաւորին, այդ կողմերը գտնուած միջնադարեան Հռովմական արուեստի շինութիւններին, որոնց աւերակները յետագայում ժողովորդից ստացան «Յրգատի գահ», կոչումը:

Ետին տոհմային աւանդութիւններին եւ այն ոչ առանց գուճաւորման, կարելի է վերագրել եւ Կամսարական իշխանական տան նահապետի մկրտութեան պատմութիւնը — այսինքն Ս. Գրիգորի ձեռքով — եւ իբրեւ ճեղքայեւ երասխաձոր գաւառի Յրգատից սեփականութիւն ստանալը:

ՂԱ. գլխի առթիւ, ուր հաղորդուած է Ս. Գրիգորի եւ Ռատակէսի վախճանը եւ լեւան կոչումը «Մանեայ այր», պէտք է դիտել, որ սա մի տեսակ մոլայիկ է Ագաթանգեղոսի, Փաւստոսի, Գր. Նազխանգացու գրուածքներից, եւս եւ մի պատմութիւնից, որ ծանօթ էր Խորենացուն իւր ժամանակին՝ «Եպիսմաութից», որ մեջ հասնել է յետին Ժ. եւ ԺԱ. դարերու խմբագրութեամբ, այս — «Մեծին Ներսիսի վարքն է»: Պարզութեան համար յառաջ բերելը հատուածներով Խորենացու իսկական աղբիւրներն այն կարգով, ինչ կարգով նա գտնուած է Նոյանից: Այսպէս մեզ հետաքրքրող գլխի սկզբը վերցուած է «Ներսիսի վարքից»:

«Եսմի ութուտասներորդի» մեծին Տըրդատայ Նստաւ յաթոռ սրբոյն Թաղէոսի առաքելոյ՝ Լուսաւորին Հայոց Գրիգոր, եւս դարձեց զամենայն Հայս ի գիտութիւն ճշմարտութեանն Քրիստոսի»:

Սրան հետեւող Նոյն ՂԱ. գլխի շարունակութիւնը փոխ է առած Ագաթանգեղոսի:

«...Ապա եկեալ՝ գտանէր ի Ղարանահեաց գաւառին ի լեւինն որ կոչի Մանայարց յանապատին: Ապա աղաչեալ... Յրգատ զՍ. Գրիգորին, զի փոխանակ այր զե... սիրեաց զմենաւորութեան կեանս, ձեռնադրեաց տացէ նմա եպիսկոպոս զսուրբ որդին իւր... զՌատակէս... Ապա եւ ինչն իսկ մեծն Գրիգոր:

1 Համաձ. նաեւ Ալիշան «Արարատաց» էջ 285:

2 Այս յիշատակարանի մասին մանրամասնօրին առեւելու էջ 211 եւ հետ:

3 Խորենացին «ստում» է «Եփեմ տաթ», որ կարելի է բացատրել արտագործելի ձեւ եւ ԺԱ. թուերը միմեանց հետ չփոխելով:

4 «Սեփեթ», VI, էջ 97

գրգռու ելաներ զանգեղ կարգերով, եւ զգաւա-
ռովքն աշակերտելով յաշխարհին Հայոց
զուարթացանքն, զօրացուցանել, նորոգել եւ
հաստատել¹։

Այստեղ իսկ՝ ի միջի այլոց, փոխ եւ առան-
ճազանքն մի հաստատել նրա՝ «Բան առ ինքն
եւ առ Տաշր», գրուածքից եւ յարմարեցանք եւ
Գր. Լուսաւորչի ճգնաւորական կենքի մանրա-
մասնութիւններին. — «Ծին պատուէ զփախուստ
եւ զլերինս եւ զամայութիւն եւ զճանդար-
տութիւն զհոգւոյ եւ զմարմնոյ եւ զմտացն
յինքեանս երթալ... որպէս զի իօսեցի առանց
աղտոյ ընդ Աստուծոյ...»²

Թաքորդ ՂԲ գլխում խորենացին դեռ եւս
պէտք եւ օգտուի նոյն հեղինակի հաստատանքից։

Յետագայ տեղեկութիւնները նոյն ՂԲ գլխի
համար Մովսէս քաղում եւ փաստասիրք եւ - Ս.
Ներսիսի Վարդից, որը ի դէպ եւ ասել մշա-
կուած եւ նոյն Բիւզնդացու հիմամբ, նշող են
յիշում Ռատակէսի Նահատականութեան եւ Վեր-
թանէսի կաթողիկոսական աթոռին յաջորդելու՝
մանրամասնութիւնները³։ «Ս. Ռատակէս»,
ասում եւ «Վարդում», եկազ եպիսկոպոս
Հայոց մեծաց ամսն եւթն։ Նւ սպան զնա Ար-
քեղայոս ազգաւ Հայ ի ծովաց զաւատին,
եւ ընդին զմարմին Ռատակէսի յեկեղեցաց
զաւստ ի թիւն աւան, եւ անդ թաղեցին զնա
նւ յաշխարհաց վաթոռ նորա եււէց եղբայրն
Վրթմանէս։

Բաց ի գրանից խորենացին բացատրում է,
որ «Արքեղայոս եր կարգեալ ի վերադարձութիւն
ի Զորր օրդն կոչեցեալ Հայոց», եւ որ Ռատա-
կէսի սպանութիւնից յետոյ «ինքն գնաց փախըս-
տական ի Յաւրոս Նիւքիեցոյ», — մանրամաս-
նութիւններ, որ պակասում են «Վարդի» մէջ։

«Վարդից», եւ վերջումս նաեւ Ս. Գրիգորի
նշխարների գիւտի տեղեկութիւնները⁴, բայց այդ
«Վարդը» դեռ չգիտեմ նշխարների ըստ աւ-
անդութեան գտնողի անունը։ Բերում եմ այդ
անվաներ հաստատման. «... Յետ ամաց փոխի
ի կարգս Տրեշտակաց եւ գտեալ զնա վախ-
ճանեալ յոռն լերին Նովուացն եւ ոչ ծա-
նեան. եւ թաղեցին զնա իւր հանգերձին։
... Եւ յաւուրն յայտնսկ յայտնեցան նշխարք
Ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչի, եւ ազգ եղեւ
կայսերն Յուսայ Զնոնայ եւ նա առպէս բա-

զում ընգեռնս զօրաց ի ձեռն զարմարան Միշա-
գետաց, որ եկեալ լոռնութեամբ յափշտակեաց
գնչխարս Ս. Գրիգորի եւ ետ զաջ ձեռն
Հայոց...»⁵

Բայ ի վերոյիշեալ աղբիւրներից, քննելի
գլխում մենք գտնում ենք տեղեկութիւններ,
որոնք մասին դժուար եւ անել որոտեղից են նշող
առնուած։ Այսպէս «Մանայարք», լեռան,
ուր Ս. Գրիգորը ծածկուեց, ըստ իս խորենա-
ցին կամայական եւ ընդունում «Մանայարք»,
որ կոչուել է իւր թէ Հոգիսմէի ընկերուհի-
ներից մէկի անունով, որ բնակուեց այդ լեռան
մէջ։ Յիշումք Ազաթանգեղոսն ասում եւ «ի
ինդիր երաներ (Յրդաւ) Ս. Գրիգորի՝ ուր եւ
գտեց։ Այս եկեալ՝ գտանք ի զարանաղեաց
զաւստին, ի լերինն, որ կոչի Մանայարք
յանապատին, Սակայն Մանայ կոչսի մասին ոչ
նա եւ ոչ եւս միւս պատմիչները մինչեւ Թ. Գաբը
օշինչ չեն յիշում։

Ես կարծում եմ այս դէպքում մենք գործ
ունենք յետին ժամանակում կազմուած ժողո-
վորական ստուգարանութիւններից մէկի հետ,
որոնք օրինակներ մեր պատմագրի մօտ բաւա-
կանաչափ կան։

Ապա, խորենացու պատմութիւնը թէ ինչ-
պէս Ս. Գրիգորը բնակուում է Մանայարքում,
ինչպէս հովիւները պատահմամբ գտան նրան
մեռած եւ թաղեցին, նոյնպէս լուսաւորչի
նշխարների երեւումը ինչոր ճգնաւորի շատ առ-
րիններ անցնելուց յետոյ — այս բոլորը կրկնու-
թիւն է, ինչու յիշում եւ Ս. Ներսիսի վարքը,
այն տարբերութեամբ, որ մեր պատմիչը բաց ի
գրանից յիշում եւ նոյն ճգնաւորի անունը, թե-
րեւս փոխ առած յետին ժամանակի առանդու-
թիւններից, նա կոչում էր Գառնիկ։

Ս. Գրիգորի նշխարների գիւտի խնդիրը
շատ կարեւոր է Հայոց եկեղեցական պատմու-
թեան տեսանկյանց, եկեղեցական աւանդու-
թիւնն այս մասին համաձայն է Ս. Ներսիսի
վարքի եւ խորենացու պատմութեան հաջոր-
դածներին։ Բայց այս աւանդութեան բացարձակ
հակառակ եւ փաստասիր վկայութիւնը, որին բո-
լորին անանօթ են մանրամասնութիւններ՝ թէ
Լուսաւորչին թաղող հովիւներ, թէ նշխար-

¹ Իզաթ. էջ 842—845, 852—853։

² Յեւ. Վիենն. Մի. Թ. 217, էջ 105 Բ։

³ Փաստոս, Գ. 2—8։

⁴ Սոփիք Գ. էջ 9—10։

⁵ Ազաթանգ. Վենետ. էջ 642. «Մանայարք»,
գործն աւելի ուղիւ էլ լինելու պիտի իտեղք կարգաւ «Մա-
նայարք», նման գրոցի Մանանաղի գաւառին։ Կոստան-
դնուպոլսոյ (1824) տպ. ջ. փոք. «Մանայարք», ունի «Մա-
նայարք» որ անգղաւս սրբագրուած եւ համաձայն խորե-
նացու։

ների գիւտը մի ոմն Զնաւորի ձեռքով եւ թէ յետոյ ուրեմն այդ նշխարների փոխադրութիւնը թորգան գիւղը: Չմանելով այս խնդրի մանրամասնութեանց մէջ, եւ թոյլ եմ տալիս միայն յառաջ բերել փաւստոսի որոշակի վկայութիւնը այս խնդրի մասին: «Արժանի էրեւալ շիրիմը հանգստեան. եւ մեծին Գրիգորի ի Գարանաղեաց գաւառին, ի գիւղն, որ անուանեալ կոչի թորգան: «ՁՍ. Վրթանէս... մեծաւ լայնաց տրտմութեամբ մինչեւ ի գիւղն թորգան ի Գարանաղեաց գաւառն յուղարկէին: Եւ անդ ԱՈՒ մեծի հայրապետին Գրիգորի զորա սուրբ զոսկերան հանգուցանէին» (Գ. տպ. ԺԱ): «...բերին (զՅուսիկ) ի գաւառն Գարանաղեաց ի գիւղն թորգան... եւ եղաւ մօտ ԱՈՒ Գրիգորի եւ ընդ հարս իւր» (Գ. տպ. ԺԲ): «Ի Գարանաղեաց գաւառին յեկեղեթին թորգանու պատուին վասն զերեզմանացն հայրապետին Գրիգորի» (Գ. տպ. ԺԳ):

Այս բոլոր վկայութիւնները վերաբերում են Ս. Գրիգորի մահուանը անմիջապէս հետեւող ժամանակին՝ Գ. դարուն:

(ՎԵՐԷ յԱՆԵՐԿԷՍ)

ԳՐ. ԽԱՍԱԹԵՆՍՑ
Թարգմ. Ա. ՍԱՐԳ.



Ե Ղ Ի Ծ Է

ՔՆՆԱԿԱՆ ՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ե.

ՆՈՐ ՊԱՏՄԱԾՆԵՐ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՎԵՐԱ-
ԲԵՐՄԱՐԻ

Մատենադարանն երեւոյթներով շրջապատուած է վարդանանց Պատմութիւնը: Կան պատմական իրողութիւններ, որոնք չեն պատմուած բուն պատմութեանց մէջ (Փրպ. Եղիշէ): Եւ քաղաւ կու տան այս երեւոյթներուն: Քանի վարդանի քաջագործութիւններուն առաջին պատկերները Հայոց պատերազմի մուտքին մէջ չեն արձանագրուած. առոնք սակայն շատ կարեւոր պարագանք են եւ պատմական արժէք մ'ունեն:

Յովհանն Պատմաբան եւ ինքնա Սրբունի պահած են զանոնք: Պատմաբանը՝ վարդանանց Պատերազմի բոլոր իրողութիւններուն իբր խտացումը յառաջ կը բերէ զանոնք. հաջիւ ակնարկելով թէ վարդանն եւ վարդանանք ուրիշ քաջութիւններ ալ ի գործ բերին: Վարդանանց Պատմագիրներուն յիշատակութիւնն իսկ չ'ընեն: Թաւ-

մա՝ Պատմաբանն աւելի մանրամասնութիւններ ունի, որոնք երկրորդական չեն եւ մասնաւոր տեղեկութիւն մը վարդանի մասին: Մոկաց կողմերը Ջուղայի ամրոցաւ (Ջերմաձոր) ապաստանելը (ԹՎԺ. Արծ. Դպր. Ա. ԳԼ. ԺԱ): Արեւունիկն այս նոր պատմաններուն իբր աղբիւր ցոյց կու տայ Վրասահման խոտորվածողէ Հաւասարանիւնը. իսկ վարդանանց միւս գեպքերուն համար, որոնք ծանօթ են մեզ, առաջին պատմագիրներու յիշատակարանները մասնաւոր կ'ընեն:

Այս բոլոր նոր պատմանները, թէ պատմաբանն եւ թէ Արեւունիկն, որ Հայոց պատերազմին նախնադանքը կը յորինեն, աւելորդ չենք համարի դէմ ընդ դէմ դնել իբրտու հետ, ոչ միայն մեր ուսումնասիրութեան ընթացքում վարդանանց նկատմամբ կարեւոր պարագայ մ'ալ ի վեր հանելու դիտումով, այլ մանաւանդ այս բաղդատուութեան տարբերութիւններն անմասնօթ են Յովհանն Պատմաբանին: Թողմա ճշուած ընդլայնումներ ունի կամ՝ թերթողութիւնն զերեւա տնիշ մը նախնաց բացատրութեամբ, եւ միշտ հմտութիւն ցուցնելու յաւակնութեանը կը զեղծանի: Իւր սխալներն ասոնց կը պարտի:

Յովհանն Պատմաբան
(էջ 36):

Յովհանն Սրբունի
(Դպր. Բ. ԳԼ. Ա.):

Եւ ապա ոմանք ի մերջ նախորդաց գաւառանդը հարգ ի մէջ առեալ Հաւասարանի զհատու զհատու քրիստոնէութեան՝ հիւսիս-հարաւս օրինաց հնազանդութիւնը: Իսկ աւագադիրք ի հետն անհաճոր իմացմանց առ Պերսի արքայ Պարսից, եւ յանձն առեալ ինքնատմ մուրաւիթեամբ զորեւն մազ-գեղանց միջապալստ յամուսնութեանց: Եւ ինքրեւ յարգույն զինքանութիւն Հայոց:

Ընդ նոյն ժամանակ իւր-հարգ ի մէջ առեալ Հաւասարանի զհատու զհատու քրիստոնէութեան՝ հիւսիս-հարաւս օրինաց հնազանդութիւնը: Իսկ աւագադիրք ի հետն անհաճոր իմացմանց առ Պերսի արքայ Պարսից, եւ յանձն առեալ ինքնատմ մուրաւիթեամբ զորեւն մազ-գեղանց միջապալստ յամուսնութեանց: Եւ ինքրեւ յարգույն զինքանութիւն Հայոց:

Վճիռ ի Դժնի քաղաքէ

Եւ նորա ըստ ցանկութեան տնտիս փառամուրաւիթեան կատարեալ զենդիրք, եւ զարեւալ գաւառս ի Հայոց ընդ իւր անկում զՎճիռ Պարսից մեզպէտ: Եւ ընդ մտանքն նոցա յայնորս՝ միգրմիցին զուխ քրիստոնէութեան, եւ փոյլ ընդ փոյլ ձեռնամուր ի եղին աւելի քանդել զեկեղեղի, զուռն աղօթից կործանել, զպեղած իւրհրդակաւս ժողովարարութեան յառաջիկ, հիւսիս ի վերայ տապալել զաւագաւն մաքրափոյլ լուսաւորութեան Հաւադին որդի, զառնապէս լուրապալ լուրապալ զաւանդանց զգաւատեանց նորոց կտակարանաց, զարս եւ զինքան մատնել ի բանդս ի խաշտան զանոս ծանր հարկապահան վաւթեամբ, զի պատու կարգու-

1 Այս մասին տես նաեւ Դաւղաշանմ. նրա քննադատութիւնը Փաստափ մասին էջ 30: Վերան 1898ին: